



Դրամական սոցիալական օգնություն` կենսական աջակցություն աղքատության սահմանից ներքև գտնվող ընտանիքների համար

Ընտանիքի կրկնական վերստուգումը

- Ընտանիքի կրկնական գնահատման պահանջի պարագայում, ընտանիքի լիազորված անձը լրացնելու է հայտի հատուկ ձև, որտեղ նշվելու են հետևյալ պատճառները.
- Ժողովրդագրական փոփոխություն ընտանիքում:
- Զբաղվածություն, օրինական եկամտի ստացում:
- Աշխատանքի/օրինական եկամտի կորուստ:
- Բնակավայրի փոխում:
- Հայտարարագիրը լրացնելուց անցել է ավելի քան մեկ տարի:
- Սահմանափակ կարողության կարգավիճակի հաստատում:
- Այլ պատճառ, որը հաստատում է ընտանիքի սոցիալ-տնտեսական իրավիճակի էական փոփոխությունը:

Դրամական սոցիալական օգնության ընդհատման պատճառները

- Ընտանիքի դիմումը:
- Ընտանիքի տվյալների միասնական բազայում գրանցման վերացումը:
- Ընտանիքի վարկանիշային միավորի փոփոխումը, եթե միավորը գերազանցում է 57 000-ը:

Դրամական սոցիալական օգնության քանակը

Սոցիալական օգնության քանակը մեկ անդամից բաղկացած ընտանիքի համար կազմում է 30 լարի և ընտանիքի ամեն հաջորդ անդամին ավելանում է 24 լարի:

Օրինակ.

Երեք անդամից բաղկացած ընտանիքը կստանա 30+24+24=78 լարի:

- Դրամական սոցիալական օգնության քանակը հաշվարկելիս, տեղի չի ունենում ընտանիքի այն անդամների հաշվառումը, ովքեր չնայած տվյալների բազայում գրանցմանը, սոցիալական օգնության նշանակման ժամանակ.
- Պատժակատարողական հիմնարկությունում դատապարտյալներ են, ովքեր օրինական ուժի մեջ մտած դատավճռի համաձայն, ենթարկվել են ազատազրկման:
- Հարկադրաբար բուժման ուղարկված անձինք:
- Ժամկետավոր զին-ծառայությունում գտնվող անձինք:
- Երկրի սահմաններից դուրս երեք ամսից ավելի ժամկետով մեկնած անձինք:
- Ինստիտուցիոն հիմնարկություններում են և գտնվում են լրիվ պետական խնամքի տակ, բացառությամբ այն անձանց, ովքեր գտնվում են նախնական բանտարկությունում և նրանց դեմ դատավճիռը դեռ չի մտել օրինական ուժի մեջ:

Վրաստանի աշխատանքի, առողջության և սոցիալական պաշտպանության նախարարություն

Սոցիալական ծառայության գործակալություն

Հասցեն` Թբիլիսի, Ծերեթելու պողոտա №144
Թեժ գիծ` 2 51 00 30
www.ssa.gov.ge
info@ssa.gov.ge

Վրաստանի աշխատանքի,
առողջության և սոցիալական
պաշտպանության
նախարարություն



Սոցիալական ծառայության գործակալություն



Դրամական սոցիալական
օգնություն` կենսական
աջակցություն աղքատության
սահմանից ներքև գտնվող
ընտանիքների համար



Դրամական սոցիալական օգնություն՝ կենսական աջակցություն աղքատության սահմանից ներքև գտնվող ընտանիքների համար

Ծրագրի բենեֆիցիալներն են այն ընտանիքները, որոնք գրանցված են սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների միասնական բազայում և նրանց շնորհված վարկանիշային միավորը չի գերազանցում 57 000-ը:

Սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների միասնական բազայում գրանցումը

- Սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների միասնական բազայում գրանցվելու համար ընտանիքի անդամը կամ ընտանիքի լիազորված ներկայացուցիչը հայտի ձևը լրացնելու համար պետք է դիմի գործակալության տարածքային միավոր:
- Սոցիալապես անապահով ընտանիքների վյալների միասնական բազայում գրանցվելու համար ընտանիքի ներկայացուցիչը իր հետ պետք է ունենա.
- Անձը հաստատող վկայական.
- Խնամակալությունը կամ հոգացությունը հաստատող փաստաթուղթ կամ նոտարապես վավերացված լիազորություն, այն դեպքում, եթե դիմում է ներկայացնում ընտանիքի անդամ չհանդիսացող անձնավորություն:

Ընտանիքի հայտարարագրի լրացումը և սոցիալական օգնության նշանակումը

- Գործակալության պատասխանատու անձը (սոցիալական գործակալը) ընտանիք այցելելիս, լիազորված ներկայացուցչի կողմից ստացված և ստորագրությամբ հաստատված լրատվության հիման վրա լրացնում է ընտանիքի հայտարարագիրը:
- Սոցիալապես անապահով ընտանիքների տվյալների միասնական բազայում ընտանիքի հայտարարագրի զետեղման և սահմանված մեթոդոլոգիայով մշակման հիման վրա, հայտարարագիրը լրացնելուց 30-րդ օրացուցային օրը ընտանիքին շնորհվում է վարկանիշային միավոր:
- Ընտանիքի սոցիալ-տնտեսական կացությունը գնահատելիս, լիազորված ներկայացուցչի կողմից ոչ ճիշտ (կեղծ) լրատվություն հաղորդվելու պարագայում ընտանիքի հայտը ինքնաբերաբար կորցնում է ուժը, և ընտանիքը զրկվում է առաջիկա երեք տարվա ընթացքում տվյալների բազայում գրանցում պահանջելու իրավունքից:
- Կենսական աջակցության համար սահմանված վարկանիշային միավորը չպետք է գերազանցի 57 000-ը:
- Եթե ընտանիքին շնորհվել է համապատասխան վարկանիշային միավոր (57 000-ից ոչ ավելի), դրամական սոցիալական օգնության՝ գոյատևելու նվազագույնի նշանակման իրավունք վերապահվում է վարկանիշային միավորի ուժի մեջ մտնելուց երրորդ ամսում:
- Դրամական կենսական աջակցության նշանակման ընթացակարգը իրականացվում է գործակալության պատասխանատու անձի կողմից քաղաքացու ընտանիք այցի ժամանակ՝ համապատասխան ձևի փաստաթուղթ լրացնելուց հետո:

Սոցիալական օգնության ընտրությունը

- Ընտանիքն իրավասու է ընտրել այն սոցիալական օգնությունը, որն էլ ցանկանում է ստանալ:
- **Տեղեկատվության համար.** փախստականի ամենամսյա աջակցության փոխարինումը սոցիալական օգնությամբ չի նշանակում փախստականի կարգավիճակի հանում:
- Այն պարագայում, եթե ընտանիքը ցանկանում է ստանալ ընտանեկան օգնություն և/կամ փախստականի աջակցություն, ընտանիքի լիազորված անձը լրացնում է սոցիալական օգնություն նշանակելուց հրաժարվելու դիմում:
- **Տեղեկատվության համար.** ընտանիքն իրավունք ունի հրաժարվելուց հետո պահանջել օգնության նշանակում: Տվյալ դեպքում սոցիալական օգնությունը՝ գոյատևելու աջակցությունը նշանակվում է գործակալություն դիմելուց (դիմումի ներկայացում) հաջորդ ամսում:
- Սոցիալական օգնության նշանակման դեպքում, ըստ գործող օրենսդրության, ընտանիքը դադարում է ստանալ ընտանեկան օգնություն և/կամ փախստականի ամենամսյա աջակցություն:
- Գոյատևելու աջակցության ընդհատման պարագայում, ընտանիքը ինքնաբերաբար ստանում է փախստականի ամենամսյա աջակցություն:
- Գոյատևելու աջակցության ընդհատման պարագայում, ընդհատված ընտանեկան օգնությունը, գործող օրենսդրության համաձայն, վերականգնման չի ենթարկվում: